

dih yemtunet, va hōmetvar amataš val anao-  
metih yemtunet, va xod-dušak amat val par-  
jamkar mat bēt.

82. Mano dard hōmantar?

— Tubanik-i loit prazand-i danak, va  
šayandik mano prazand-i ašayandik ranjvar-  
tar yehvunet.

83. Mano ast-homandtar?

— Šayandik amataš ašayandik pataš  
aparviz; va danak amataš duš-agač matam  
pramatar, va šapir amataš šarih pataš pa-  
taxšay.

84. Mano avoxšaišnitar?

— Hu-dat-i azatak, hu-homet-i avenač.

85. Mano pašimantar?

— Xod-dušak amat val arjam-i karmat;  
ruban šnač-i darwand, va varunik-i peč-krat  
avaz homand.

86. Maman hu-sipačan-ra tuxšisn?

— Zak mano čutimandiah vadunad.

87. Mano hu-vinašnitar 72?

— Zak mano dayn valman mano niukih  
avaš aškahunet husipač yehavunet.

88. Maman dučrobantar?

— Zak mano hanakih pavan anšotaan  
kartan pavan dattar yehsunet.

89. Anšotaan dayn gētih maman avaeš-  
nitar mehimmunet?

— Zak mano vad tandrust, huzamih, va  
amat tan vīmar yehevunet, drustih-i tan, va  
amat tan anaometih yehavunet, buxtakih-i  
ruban.

90. Anšotaan val maman kamaktar ho-  
mand?

— Val kamak aviniazih x<sup>v</sup>ahišn.

91. Maman aviniazih kamak x<sup>v</sup>ahišn?

— Kola maman arzu madam yehvunet  
yaptan, aviniazih zak-i dayn amet.

յուսալից որ յանյուսութիւն զլորի, եւ  
անձնդիւր որոյ վախճան գործոյ յանդի ի  
վատ:

Ո՞վ աւելի ցաւագին:

Հօրն<sup>67</sup> (որոյ) չիք որդի իմաստուն, եւ  
արժանաւորն որոյ որդին անարժան եւ վշտա-  
բեր է:

Ո՞վ աւելի տրտմագին:

Արժանաւոր որում անարժանն յաղթէ:  
Գիտուն յոյր վերայ դժակահն կարգի հրա-  
մատար, եւ առաքինի որում չարն իշխէ:

Ո՞վ աւելի առատարաշխ:

Բարեգաւտն ազատ, բարեյոյսն անջլատ:  
Ո՞վ աւելի փաշաման:

Ինքնահաւան որոյ վախճան գործոյ հա-  
սեալ է<sup>68</sup>. անձնդիւր<sup>69</sup> նենդամիտ. եւ ստա-  
հակ<sup>70</sup> յոռեխրատ որ (ի միտս եկեալ) դառ-  
նայ (զղջայ):

Ո՞վ բարեսպասութեան<sup>71</sup> ջանագիր:

Այն որ (այլոց) օգտակար լինել փու-  
թայ:

Ո՞վ բարետեսադոյն:

Այն որ վասն այնոցիկ որ բարիս յինքենէ  
ընդունին՝ փառս տայ (Աստուծոյ):

Ո՞վ յոյժ գարովելի:

Այն որ չարիս մարդկան հասուցանել  
իրաւունս համարի (անձին):

Վասն մարդոց, յայսմ աշխարհի, ի՞նչ  
աւելի ցանկալի:

Այնմ որոյ մարմին (իւր) առողջ է՝ երա-  
նակտ կեանք. եւ եթէ մարմինն հիւանդ՝ ա-  
ռողջութիւն. եւ եթէ մարմինն անյոյս՝ փըր-  
կութիւն հողոյ:

Մարդիկ ի՞նչ կամակար<sup>73</sup> լինին:

Կամելով ապենիազութեան ցանկալ:

Ի՞նչ (է) ապենիազութիւն կամել:  
(Վասն) ամենայնի որում ցանկայ (մարդ)  
թէ ունիցի, ապենիազ լինել սրարտ է<sup>74</sup>:

### ՍԿԵՒԹՈՅԻ ՎՈՆՔԸ

ՆԿԱՐԻՉՆԵՐ ԵՒ ԳՐԻՉՆԵՐ

Ռուբինեաններու իշխանութեան եւ թա-  
ղաւորութեան շրջաններուն Կիլիկիայի եւ  
յատկապէս Սկեւոսյի, Գրազարկի, Հոռո-  
կայի ու Վահկայի մէջ նկատողութեան ա-  
ռարկայ կ'ըլլան բազմերանդ մանրանկար-  
չութիւնը եւ զեղագիր գրչութիւնը: Մանա-  
ւանդ երբ Կոստանդին Բարձրբերդցի հայ-  
բապետական գահին վրայ կը բազմի եւ ու-  
շաղբութիւն դարձնելով գեղարուեստի՝ հե-  
տեւեալ կանոնը կը հաստատէ՝ «Եւ հրա-  
մայեցէ եպիսկոպոսն զսուրբ գիրս եկեղեց-  
ւոյ գրել արուեստաւորաց եւ գիտնոց եւ  
ուղղափառաց» (Կիր. Գանձ. Պատմ., էջ 170):  
Բայց անոր դահակալութենէն շատ յա-  
ռաջ, գլխաւորաբար Ներսէս Լամբրոնացիի  
քաջալերանքներով եւ օժանդակութեամբ  
Սկեւոսյի մէջ գրչագրութիւնն ու մանրա-  
նկարչութիւնը կը զարգանան ու կը ծաղկին:  
«Ստուգիւ Սկեւոսյ այս մէկուկէս դարուն  
(ԺԲ.—ԺԳ.) ընթացքին նկատուեցաւ ոչ  
միայն կենդրոն գրական շարժման, կը գրէ  
Հ. Ակինեան, այլ եւ արուեստանոցը հայ  
գրչութեան արուեստին: Հոն գործեցին  
Ներսէս Լամբրոնացի, Գրիգոր Սկեւոսցի,  
Գէորգ Լամբրոնացի իբրեւ մատենագիրներ:  
Մեծահռչակ գրիչներ հանդիսացան ԺԲ.  
դարու Բ. կէսին Կոստանդին, Սամուէլ, իսկ  
ԺԳ. դարուն վերջը Գէորգ Լամբրոնացւոյ  
առաջնորդութեան տակ բարգաւաճեցաւ հոն  
գրչութեան դպրոց մը, որ տուաւ անթիւ  
գրչագիրներ, ինչպէս Ստեփանոս Գոյնեը  
Երեցանց, Մովսէս Երզնկացի: Գրչութեան  
արուեստին հետ հոն զարգացաւ նաեւ ման-  
րանկարչութեան արուեստը: Գրիգոր Մլի-  
ճեցւոյ — կարելի է զինքը իրաւացիորէն  
նաեւ Սկեւոսցի յորջորջել — ժամանակա-  
կէց կը գտնենք անուանի նկարիչ գրիչը  
Կոստանդին» (Սկեւոսյի Աւետարանը 1197  
թուականէն Լվովի հայ արքեպիսկոպոսա-  
կան դրագարանին մէջ, Վիեննա 1930, էջ  
14, արտատպ. Հանդ. Ամսօրեայէ, 1930,  
էջ 1—4):

ԿՈՍՏԱՆԴԻՆ 1192—1193 թուականին կը  
գրէ Ներսէս Լամբրոնացիի համար մեծա-  
ղեր, նկարագարը եւ անթերի Աւետարան  
մը, որ ստուգիւ հիացումի եւ զնահատանքի  
արժանի է: Ստացողը ծախքէ խոյս չէ  
տուած եւ գրողն ու նկարողը ջանացած է

իշխանավայել գործ մը հրապարակ հանել:  
Հ. Սարգիսեան կը գրէ «Պատկերներս թէ՛  
իրենց նրբերանդ գոյներու թափանցիկու-  
թեամբ եւ բազմեղանակ յարդարմամբ, թէ՛  
անդամոց համաչափ յորինմամբ եւ դիմաց  
եւ կրկն գորեղ արտայայտութիւններով ցոյց  
կու տան նախ թէ արդարեւ նկարողն եւս  
ծաղկողին պէս այնքան քաջարուեստ էր  
նկարչութեան բազմատեսակ արուեստին  
մէջ. Բ. թէ կորսուած միւս պատկերները  
ոչ միայն ըլլալու էին թուով հմմտ. Թ. 102ի  
պատկերներուն, այլ նոյն իսկ անկէց օրի-  
նակուած եւ կամ անոր նախագաղափար  
եղող Երուսաղէմեան Աւետարանէն» (Յու-  
ցակ, Ա., էջ 555—556): Կցեմ անյապաղ որ  
Հ. Ակինեան կը խորհի՝ թէ ակնարկուած  
Թ. 102 Աւետարանն ալ Սկեւոսյի վանքէն  
ըլլայ: Սոյն երկու Աւետարաններն ալ Վենե-  
տիկի Միսիթարեան Հայրերու Մատենադա-  
րանին մէջ կը գտնուին եւ բախտն ունեցած  
եմ գտնուք նկատողութեան առնելու եւ կը  
հաստատեմ Հ. Սարգիսեանի արտայայտու-  
թիւնները: Մեծ. Հայրը վերոյիշուածներէ  
ստալ կը գրէ՝ «Յոյժ դժուար է եւ չեմ կար-  
ծեր որ մանրամասնօրէն նկարագրած եղայ  
եզական Աւետարանիս խորանները, սակայն  
կրնամ ըսել որ ծաղկողն առաւելան հան-  
դերձ պատկերացուցեր է իր քաջարուեստ  
վրձինով են ամենագան մոտիւնելով —  
Ներսէս Ծնորհալոյ Որարանաց մեկնու-  
թիւնները: Գրազարկի վանքում գրուած եւ  
ծաղկուած ԺԲ. Աւետարանի խորանները...  
շատ կը նմանին ասոնց, գէթ իրենց ճարտա-  
բապետական ոճովը, սակայն եթէ անիկայ  
գլուխ գործոց մը համարինք Գրազարկի  
նկարչական դպրոցին — ինչպէս Լամբրո-  
նեան Աւետարանս է անտարակոյս Սկեւոսյ  
վանից նկարչութեան, ըստ իս վերջինս ա-  
մէն կերպով յոյժ աւելի կատարեալ է եւ  
գարմանալի, արդարեւ եզական իր մանրան-  
կարչական զարգացման ամէն տեսակէտնե-  
րով...» (անդ, էջ 553—554: Նմոյշներ կա-  
րելի է տեսնել Բազմավէպ, 1935, էջ 306,  
307, 310 ուր եւ յիշատակագրութիւններ,  
էջ 432—433, իսկ գունաւոր նմոյշ մը՝ Սի-  
սուան, էջ 84—85): Կոստանդինի գրչէն է  
նոր Ջուղայի Թ. 27 Աւետարանը, գրուած  
1195ին: Անոր նկարները հանուած են, իսկ  
յիշատակագրութիւնները հրատարակուած  
Պ. Յ. Քիւրտեանէ (հմմտ. Բազմ. 1939,  
էջ 280—281):

67 Իմա՛ կարողութեան տէրն, թէ՛ հարստու-  
թեամբ, թէ՛ իշխանութեամբ:  
68 Երբ ճախող ելքը կը տեսնէ իւր գործերուն:  
69 Անձին շահը միայն փնտռող:  
70 Աւելի ճիշդ պիտի լինէր թերեւս «ապառու»  
ըսել:  
71 Բարեբարութեամբ ուրիշը գոհ եւ շնորհակա-  
լու ձգել (obligance):

72 bīnashn = տեսողութիւն, √bīn: Իմաստն է՝  
փառք կու տայ որ ուրիշներուն բարեք կըցաւ ընել:  
Փէշութեանն կը բաժնուիմ հոս այս մեկնութեան մէջ.  
Ես ճիշդ բնագրին կը հետեւիմ, իսկ նա իրեն սեւեա-  
կէտ եղած կանխամտած մեկնութեանց:  
73 Գամաղիա լինել, իղձերուն հասնել:  
74 Ինչ բան որ կ'ուզէ մարդ ունենալ, անի ձեռք  
բերել եւ կարօտ չբաշել (ապենիազ լինել):

Վերը յիշուած Լամբրոնեան այս Աւետարանը կրնար ծանօթ ըլլալ Սկեւոյի եւ Մլիճի մէջ 1197 թուականին գրուած Աւետարանին նկարագրող Գրիգոր վարդապետին, որ սակայն անհաւանական է թէ իր նկարներու եւ զարդերու մէջ անկէ օգտուած ըլլայ: Կոստանդին, թէեւ մանրանկարչութեան մէջ հետեւող մըն է հայկական եւ բիւզանդական խառն ոճին, սակայն ունի իր առանձնայատկութիւնները եւ վրձին բունեւրու եւ շարժելու իւրայատուկ վարժ ձեռք եւ սյապէս՝ կ'ունենայ իր արժէքը եւ պատիւը: Անոր նկարագրած զրջագիրներէն է նմանապէս Ն. Լամբրոնացիին Սաղմոսաց մեկնութիւնը (Սիսուան, էջ 98):

Կոստանդինի ժամանակակից է ԳՐԻԳՈՐ վարդապետ, որ Սկեւոյի միարաններէն է եւ հոն գործած ու արտադրած: Նոյն չէ մատենագիր Գրիգոր Սկեւոցիի հետ եւ Հ. Ակինեան անոր հետ չչիօթելու համար զինքը Մլիճեցի կը յորջորջէ, որովհետեւ Մլիճի վանքի մէջ եւս ապրած է: Գրիգոր հռչակաւոր է իրրեւ ժրջան ու զեղազիր վարդապետ. «Ի ձեռն մեծահռչակ զովեալ գրչի, որ զեր ի վերոյ անհաս գտաւ ի սեռս մեր ոչ մեկանաւ միայն, այլ եւ երանգաց եւ զեղոց նկարագրող վայելչութեամբ»: Անոր գրչէն է հաւանորէն 1173ին Ներսէս Լամբրոնացիի համար գրուած Նարեկը, որ էջմիածին կը պահուի (Թ. 1561—1568, հմմտ. Յովսէփեան Գար. արքեպ.՝ Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, Պրակ Բ., էջ 15—17): Իսկ անոր վրձինի հրաշակերան է Սկեւոյի Աւետարան կոչուածը, որուն նկարագրութիւնը եւ որուն մասին ուսումնասիրութիւն մը ունի Հ. Ակինեան (Սկեւոյի Աւետարանը 1197 թուականէն... հմմտ. վերը): «Աբանչիլի արուեստով հիւսուած են խորանները, ուր նկարիչին նուրբ վրձինը ստեղծած է բազմապատիկ զարդեր եւ ճարտարապետական շարժագծեր» (անդ, էջ 14): Ամբողջին մէջ արեւելեան գորգապիտի աշխարհն է որ կը խօսի, չին հայկական-արեւելեան արուեստը, որ նոր գունաւորմամբ զարգացած, բարդաւած կերպարանքի մէջ կը կրկնուի (անդ, էջ 20):

Այնպէս կ'երևայ թէ Գրիգոր նկատուած թեան առած ըլլայ համանուն Գր. Արկուեցիի Աւետարանը, որ 1066ին Սերասոսի գրուած է եւ հաւանորէն 1194ին Սկեւ-

ոյի կամ Մլիճի վանքը հասած ըլլայ եւ կամ այլուր Գրիգոր Սկեւոցի-Մլիճեցի վարդապետին աչքերուն հանդիպած: Անոր նկարներէն եւ նկարչութեան ձեւերէն անկախ ներշնչուած եւ օգտուած է, սակայն զիտցած է իր անկախութիւնը պահել եւ զայն հետաքրքրական ընել նորութիւններ երեւան հանելով եւ աւելցնելով: Գրիգոր եւ Կոստանդին ունին նկարչութեան բնածին ձիրքեր, ողեւորութիւն, կը յարգեն աւանդութիւնը, սակայն զիտեն զայն բարեփոխել ու կատարելագործել (անդ, էջ 25):

Գրիգորի գրչէն են նաեւ Նոր Զուգայի Թ. 55 մագաղաթեայ Աւետարանը (հմմտ. Բաղմ. 1939, էջ 281—283 եւ ստտ Յիշատակագրութիւնը (եւ Թ. 5, Թ. 546) Աւետարանը, որ Մէլայան թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սեպհականութիւն է (հմմտ. Արարատ 1910, էջ 1885 եւ Բաղմ. 1940, էջ 63): Զայն 1949ին տեսայ Նոր Զուգայի մէջ եւ ցուցակագրեցի, սակայն ժամանակի սղութիւնը եւ ուրիշ աննպաստ պարագաներ թոյլատու չեղան նկարներու մանրամասն նկարագրութեան, ուսումնասիրութեան եւ լուսանկարումի: Կը ներկայացնեմ ցուցակագրութիւնս:

Թուղթք՝ 319: — Մեծութիւն՝ 25 × 20: — Գրութիւն՝ 20, 66, 12: Երկսիւն: — Տողք՝ 19: — Թերթք՝ նշանակուած, իւրաքանչիւրը 8 թուղթ: — Հանգամանք՝ շատ լաւ, բայց կողքի արծաթեայ զարդերէ մերկացուած ու կողոպտուած: — Մագաղաթեայ պահպանակ՝ չունի: — Կազմ՝ վրան գորշ կաշի քաշուած, կիտազարդ խաչով պնտուած, փականքներն ինկած: — Գիր՝ երկաթագիր, յստակ: — Խորագիրք՝ կարմրագիր: — Զարդագիրք՝ գոյնզգոյն, շատ ընտիր, ինչպէս որ սովորական տառերն ալ շատ սիրուն են: — Լուսանցարգրք՝ սակաւ, բայց զեղեցիկ: — Խորանք՝ Թղ. 14ա, 98ա, 152բ, 242բ, եւ կանոնք եւ աղիւսակք, Թղ. 3բ—12ա. ամէնն ալ երկնրանդ, սակիով ձոխ եւ հիւսնայի: — Նկարք՝ Թղ. 13բ՝ Մատթէոս, Թղ. 97բ, Մարկոս, Թղ. 151բ, Դուկաս, Թղ. 241բ, Յովհաննէս, խրաքանչիւրը բազմազան սակիով հարուստ, ընտիր, ճաշակաւոր, զիւթիչ: — Դատարկ՝ Թղ. 1ա—2բ. եւ կանոններու եւ նկարներու կրոնականը կամ ետեւի երեսները: — Ժամանակ՝ Ոկգ. (1214): — Գրիչ՝ Գրիգոր: — Տեղի՝ Սկեւոյ վանքը: — Տէր՝ տե՛ս Յի-

շատակագրութիւնները: — Կազմող՝ Մարտիրոս: — Տեղեկութիւնք՝ կը վերաբերի Նոր Զուգայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ, որմէ բերուած՝ կը պահուի Ամենափրկիչ վանքի Նոր Մատենադարանին մէջ:

Մատենա է Աւետարան, ուր կան Թղ. 3բ—12ա. Կանոնք եւ աղիւսակք, Թղ. 14ա—96բ, Մատթէոս, Թղ. 98ա—150ա, Մարկոս, Թղ. 152ա—289բ, Դուկաս, Թղ. 244բ—311բ, Յովհաննէս. — Իրք շնացեալ կնոջ ետեւը չէ գրուած:

Գլխաւոր յիշատակագրութիւնը տես Յիշատակագրութեանց շարքին մէջ. հոս կը դնեմ միւս փոքր ու նոր յիշատակագրութիւնները.

Թղ. 315բ. Այս իմ գիր է Ստեփաննոսի անարժան քահանայի եւ անպիտան ծառայի Բրիտանոսի եւ եմ եղբայրն Յովհաննէս քահանային, որ ստացայ գուրբ Աւետարանս զայս իմ արդար արդեանց ըստ վերագրելոցդ ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ետու գաս արտի յաւթարութեամբ եւ արութեամբ իմով եղբաւորդուց Յովսէփայ քահանայի, զոր Աստուած վայելել տացէ իւր եւ որդւոց: Արդ չունի ոք հրաման յԱստուծոյ եւ յինչն հակառակ կալ գրոյս ոչ յիմոց եւ ոչ յաւտարաց եւ Բրիտանոսի փառք յաւտեանս ամէն:

Թղ. 316ա. Զվերջին ստացող սուրբ Աւետարանիս երանուհի կրանաւորն Հովսէփեմէ զբոյր թագաւորին Հեթմոյ յիշեմք ի սոսկալի ժամուն մեղսաբաւիչ սրբոյ պատարալին, ով դասք սրբազանից, որ ստացաւ զսա ի վայելումն անձին եւ յետ ելից աստեացս յիշատակ հողոյ եւ բարեպաշտ ծնողաց իւրոց եւ ամենայն զարմից եւ որ ստատն է ի ձիրս բարեացապարտն Յիսուս տացէ վարձս բարեաց ձեզ յիշողացդ մեզ յիշելոցս եւ նմա փառք...: Զեղկիլի կաղմող սորա աղաչեմ յիշել ի Տէր:

Թղ. 316ա. (տարբեր գրով) Ես Կ(անընթեանիլ) երէց մտկանուն Խէվինց ի կենդանութեան իմում ետու զԱւետարանս իմ թոնին, որ յինի ինձ յիշատակ եւ թոնին, որ ինքն լինի մասն իւր ձեռագին, արդ աղաչեմ զձեզ ով դասք քահանայից յիշեցէք յաւթս ձեր զիս եւ զծնուդան իմ:

Թղ. 317բ (տարբեր գրով) Զվերջին ստացաւ սուրբ եւ հրաշափառ Աւետարանիս զԿարապետ ձերունի քահանայ յիշեցէք ի Բրիտանոս, որ երես գուրբ Աւետարանս

իւր թոնին ի կենդանութեան իւրում, զի կացցէ (քանի մը տող աւրուած) եւ թէ ոք յանդիլի կամ ի կարգաւորաց կամ յաշխարհականաց կամ յեպիսկոպոսաց եւ ձեռնամուխ լիցի նա այնպիսին զանէձս Կայենի առցէ...

Թ. 317ա. (տարբեր տառերով) Զմեղսապարտ Մկրտիչ նկարագիր եւ արքեպիսկոպոս ամենայն Մլիճեցեաց եւ էի ես փոխան կաթողիկոսի ամենայն Հայաստանեայց, որ զվերջին յիշատակարանս դրեցի: Աղաչեմ յիշել ի Տէր Բրիտանոս:

Անդ՝ նորէն տարբեր գրով՝ Զվերջին կաղմող սուրբ եւ հրաշափառ Աւետարանիս զՄարտիրոս արեղայն, որ միոյ ողորմի տան անէք: Զանարժանս եւ Աստուած ձեզ ողորմեցի:

Կաղմեցաւ Աւետարանս ի թվս Հայոց ԹՃԻ:

Թղ. 317բ. անկարեւոր բան մը:

Թղ. 318ա. տարբեր գրով՝ Յիշեցէք զվերջին ստացող սուրբ Աւետարանիս զՄիսթարն եւ զհողեւոր հայրն իւր Էվէրփաչէն եւ զմայրն Մէրտատիկն:

Դարձեալ յիշեցէք զՄիսթարն եւ զհաւաքաւոր ծնողքն իւր զԴարմանն եւ զԹաթունն եւ զկողակիցն իւր Մարամն եւ զդուստրն եւ զկոյսակիցն իւր զմիւս դուստրն որ հանիւր Եղիսարէթ եւ զմիւս դուստրն որ հանիւր Եղիսարէթ եւ զմիւս անային: Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք. Հայր մեր որ յերկին. Թոնն ՌՂ:

Թղ. 6ա—7ա. կայ յիշատակարան մը որ շատ վնասուած է եւ դժուարքերով յարձած, զի ջրով քանցուած է զնջիլ: Սկիզբն է՝ Փառք եղալի եռահիւսակ տէրութեան միասնական տէրութեան համարան ստուածութեան... (գուցէ կարեւոր բան ըլլար):

Թղ. 284. կայ՝ Ստացաւ սուրբ զրոյս Ստեփանոս վարդապետի ողորմեցի Յիսուս Բրիտանոս (հմմտ. Բաղմ. 1940, էջ 62—63):

Գրիգոր Սկեւոցի-Մլիճեցի նշանաւոր զեղազիր ու նկարիչ վարդապետը կը մեռնի 1215ին, սակայն Սկեւոյի մէջ զրջագրութիւնն ու մանրանկարչութիւնը զարկ տաւ ներսէս Լամբրոնացիին ու քաջախրուան յաջողութիւններով, կը շարունակուին շատ երկար եւ երեւան կու գան (Գրիգոր Սկեւոցի մատենագիր), Արիտակէս եւ Գէորգ զարդապետները, որոնց երկուքն ալ գրչու-





րուժեանս հայկազնեան ազգիս ՈԿԻ (1215) ի հայրապետութեան Տեանն Յոհաննէսի որդւոյ Կոստանդեայ եւ ի թագաւորութեան աստուածապաակ արքայիս Հայոց Մեծաց Լեւոնի որդւոյ Ստեփաննէի որդւոյ Լեւոնի որդւոյ Կոստանդեայ Յրոտիւրանեայց (Յառովրինանց) ի ճշմարիտ եւ ի հաւատարիմ ծառայի յԱստուծոյ եւ յուղղափառ դաւանողաց զհամազոյ Ս. Երրորդութիւնն ձեռամբ Գրիգորի մեծահոգեակ գրչի ի սուրբ ուխտն Սկեւոայ (Մքեւոայ, Երզնկայի կը կարգայ Սոգրոյ՝ հմմտ. Նկարագրութիւն Պարսկաստանի երեւելի շինուածոց, էջ 13) կոչեցեալ, զոր եւ հասեալ ի վերջ սորա ոչ կարաց կատարել: Չի հասարակաց բնութիւնս զիւրն պահանջեաց, մեռաւ ի բարեոք ծերութեան, զոր եւ Տէր հանգուցէ զնա ընդ սուրբս իւր: Իսկ սա մնացեալ թերակատար ի տարակուսանս ընկէց զյառաջասացեալ ստացող սորա: Իսկ իմ տեսեալ զսա յայնպիսի տարակուսանս կամեցայ ընուլ զպակասն եւ առեալ: Թէպէտ եւ ոչ ի կատարեալ յարհեստս, սակայն ապաւինեալ յԱստուած եւ յազաւթս (անընթեռնելի) ձեռս եղեալ կատարեցի զսա (տող մը աւրուած) ի բարեխաւութիւն ստացողի սորա: Եղեւ կատարումն սորա ի թուականութեան ՈԿԵ ի քաղաքի Տարսոն ընդ հովանեաւ Ս. Նախավկային Ստեփաննոսի (տող մը աւրուած) թիւն սիրոյ պտուղ զսա վարկացի եւ ոչ յանդգնութեան կամ ընջից յաւելուածոց, քանզի գիտող եւ իրաւարար Աստուած է: Եւ ստացաւ զսա յորդոց իւրոց եւ ծնողաց իւրոց յիշատակ: Եւ դուք յիշատակի արժանի արարէք զստացող սորա Ստեփաննոս վարդապետ եւ զհայր սորա զպատուական քահանայն Յովհաննէս որդի Յովսէփայ քահանայի: Չսոսա զամենեւեան յիշել ի Քրիստոս աղաչեմ ի Տէր: Ժտեմ դարձեալ եւ ես (բառ մը անընթեռնելի) մեղապարտ գրիչս Գրիգոր սարկաւազ յիշել զամենայն վերակարգացեալ անուանս որ ի սմա եւ զիս զմեզաւոր գրիչս Գրիգոր սարկաւազ եւ զծնաւոյն իմ եւ զամենայն մերձաւորսն իմ աղաչեմ յիշել ի Տէր եւ Աստուած որ առասն է...: Թղ. 239 կայ՝ ԶԳրիգոր զծողս յիշեցէք (հմմտ. նաեւ Բագմատէպ 1940, էջ 61, Յովսէփեան, Յիշատակարանք, Ա., էջ 782 եւ Արարատ 1910, էջ 885, համառոտ նկարագրութեամբ: Արագրած եմ Նոր Զուգայի մէջ, 1949ին):

Բ. ա. «Արդ Սարգիս (քհ.)... հանդերձ որդւովքն իւրով Դաւթիւ քահանայիւ եւ Վարդանաւ սարկաւազաւ եւ միւս դեռորոյս պատանեկաւն Յովհաննիսիւ... խորհեցաւ ստանալ... սուրբ Աւետարանս... եւ աղաչեաց թախանձանաւք զմեծանուն գրիչն Գրիգոր յանձն առնուլ գրել զսա ըստ տենչման սրտի իւրոյ: Իսկ նա թէպէտ ծերացեալ էր եւ վատեալ ի տեսանելոյ, սակայն հարկեալ յանձն առ, սկիզբն արարեալ գրչութեան սորա եւ հասեալ ի վերջ գործոյս դրին եւ այլ ոչինչ կարացեալ առնել, վասն զի աւրհասն ճեպեաց փոխեցաւ յաշխարհէ եւ իմ տեսեալ զթերութիւնս սորա Գրիգոր սարկաւազ ձեռնարկեալ Եջի զթերին ծաղկաւք հանդերձ համարարառաւքն՝ ոչ ի տկարութիւն անկարութեան նայելով, այլ ապաւինեալ յԱստուած եւ յազաւթս սրբոյ հաւր իմոյ ստացողի սուրբ գրոցս ըստ իմում կարի ջանացեալ զպակասն որպէս եւ Աստուած պատահեաց եւ զրեցաւ սա գրիւ ի մեծանուն անապատն Սկեւոայ որ մերձ յամուր դղեակն Լամբրուն կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ եկեղեցոյ, որոյ անունն Ս. Փրկիչ կոչի եւ մաւրն նորին Աստուածընի եւ զերահոգեակ կենսունակ սուրբ Նշանին ի Հայրապետութեան աստուածապատիւ Տեանն Յովհաննիսի եւ ի թագաւորութեանս աստուածապաակ արքային Լեւոնի, յորում մերթուկանս Հայկոց ՈԿԵ (1216) ի դառն եւ ի նեղ ժամանակի, յորում արի աղաք քրիստոնէից որ ի Սպանիա, որ եւ Ալամանք եւ Ուն(կա)ոք եւ այլ բազում աղաքէ ձայն տուեալ միմեանց ժողովեցան անհամար հազարք եւ ամենեցուն զխաչն տերունական ի մէջ եղեալ երդամբ հաստատեցին ի սիրտս իւրեանց մեռանել յազաւս Քրիստոսի եւ սրբոյ գերեզմանի նորա եւ որպէս սկսան նոյնպէս եւ կատարեցան, թէպէտ եւ ոչ ամենեքեան սակայն բազումք եւ մեծ մասն նոցանէ քանզի դէմ եղեալ էին եկին հասին միաբանութեամբ ի քաղաքն Աքայեա եւ մարտ եղեալ կռուէին ընդ հոյսն անաւրիւնաց, իսկ վասն բազմութեան յանցանաց մերոց անգործ եղեալ մերայինք բազումք ցիրցան ցրուեցան եւ եկեալ հասան մինչեւ ի մեզ յերկրիս Կիւլիկեցոց եւ բազումք մորեալ ի ճանապարհի մատնեցան ի բանտս եւ ի սուր սուսերի եւ այս՝ վասն բազմութեան յանցանաց մերոց գործեցաւ: Իսկ թագաւորն Ունկոսայ եկեալ հասեալ ի քա-

ղաքս Կիւլիկեցոց Տարսոն առ թագաւորս մեր եւ երդամբ սիրոյ եւ խնամութեան ուխտ հաստատեալ ի միջի իւրեանց նա զառաջին եղեալ ճանապարհն ուղեւորեալ յաշխարհն իւր: Չայս փոքր շատէ ծանուցի եւ վասն որոյ սկիզբն արարի յիշատակի գրոյս, ի նոյն դարձեալ՝ վերստին զամենայն դասս սրբազանից աղաչեմ... զստացաւ սորա զՍարգիս աստուածապատիւ քահանայ, եւս առաւել զեղբայր սորա զՅովհաննէս քահանայ զգնացեալն առ Քրիստոս աղաւթից մասին արժանի արարէք... (կը մաղթէ յիշել Սարգիսի հայրը Դաւիթ քահանան եւն): Արդ աղաչեմ եւ ես մեղապարտ գրիչս եւ յետին աշխատաւոյ Գրիգոր յիշել ողորմութեամբ զմեղուցեալ հողի իմ, զծնաւոյն իմ ըստ մարմնոյ եւ զամենայն աղաւտոհմս եւ որ ճշմարիտ սիրով եւ հեղութեամբ զիմս նուսատութիւն արժանի արարեալ խրատութեամբ Աւետարանիս զյառաջասացեալ գերահոգեակ գրիչն Գրիգոր սրամախոհ եւ անհամեմատ յարուեստս, յիշատակի արժանի առաջնորդս (Տեսած եմ 1949ին ի Նոր Զուգայ, բարէք» (Տեսած եմ 1949ին ի Նոր Զուգայ, հմմտ. Բագմ. 1939, էջ 281—282 եւ 298):

Բ. «Արդ սմին այսորիկ հողելից եւ անասանոր հմտեանի սուրբ Լուսաւորչին երանելոյն Գրիգորի ցանկացող եղեալ ըզձալից եւ փափագմամբ սուրբ սիրով արժանապատիւ քահանայ ոմն Կարապետ անունն ստացաւ զսա յիշատակ իւր եւ ծնաւոյց իւրոց եւ եղբարց ձեռամբ իմով Բարսղի քահանայի, զի ես թէպէտ եւ անտեղեակ էի արհեստի գրչութեան. բայց զյաւթարութիւնն տեսի զայնմ լուսակիր առն եւ ձեռն ի գործ արկեալ յանգեցի ի մեծ եւ հոգեակաւոր սուրբ ուխտս Սկեւոայ, յամի վեցհարիւրերորդի վատնեբորդի հինգերորդի թուականիս Հայոց, ի դիտապետութեան Տեանն Յոհաննիսի եւ ի թագաւորութեանն Հայոց մեծաց Գրիստոսապատին Լեւոնի, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս եւ մաւր իւրոյ սրբուհոյ Աստուածածնին եւ կենսակիր Նշանիս, որ է մերձ անմատոյց զղեկին Լամբու, յորջորջեալ: Իսկ բարեացապարտ տէրն մեր Յիւրով եւ աղաւթաւք ձերովք զվերայդրեալքն Կարապետ եւ ծնաւոյն նորա եւ զեղբարս: Աղաչեմ յիշել եւ զանարժան ծառայս ձեր եւ զբեռն իմ զԲարսղի քահանայ եւ զընաւս,

զոր յիշեցաք... (Գարեգին Կաթ., Յիշատ. Զեռ., Ա., էջ 785—787):

Թ. Յովսէփ գրիչը ՈՂԸ (1229) թուականին Սկեւոայի մէջ Յիշատակութեան աստուածապահ զղեկիս Լամբրոնի Կոստանդեայ, կը գրէ Աւետարան մը (Հանդէս Ամս. 1954, էջ 72):

Ժ. Բարեպաշտ եւ աստուածասէր իշխանաց իշխողս Կոստանդին սերաստաւ եւ թագադիր Հայոց, տէր անմատչելի զղեկիս Լամբրոնի, ի բարի արմատոց բարի շոռաւիղ, որդի մեծազաւր սեւաստաւսին Հեթմոյ, որդւոյ Աւչին, որք յաշխարհէն արեւելից եկեալ ընդ այլ ազատացն ընդ բռամբ անոր զանաօիկ բերդս Լամբրուն եւ ժառանգեցին հարք որդւոց եւ էհաս մինչեւ ի սա: Որ եւ ըզձալի տենչմամբ փափագաւ սա միշտ գրոց ընթերցման եւ պայծառացուցիչ եկեղեցեաց եւ սրբոց մենաստանաց, որք ընդ ձեռամբ սորին հովուին, եւս առաւել փոյթ ունի բարեկարգութեան եւ շինման քան ի հոգս աշխարհական, որ եւ յոյժ վայելչացոյց սպասուք սրբութեան ի պատիւ մեղասքաւիչ եւ կենդանարար բաշխման մարմնոյն տէրունեան, որ եւ միշտ տոչորի սիրով սրբութեան աւրբտաւրէ առաւելեալ ի նոյն...: Յոյժ վայելչացոյց եւ ամբացոյց զաստուածապահ ամբոցս Լամբրուն պարսպաւք եւ գեղեցիկ բրձաւք, սխրալի եւ գեղեցիկ շինմամբ տաճարաց եւ սրբաչէն յարկաց...:

Արդ բարեպաշտս այս որպէս ի վերոյ յիշատակեցաք, գրոց ընթերցման փափաքեալ, սիրեաց եւ զայս գիր սուրբ եւ հրամայեաց ինձ իւրոյ սեպհական ծառայի զաւակի անխնամ եւ յետին քահանայի, թարմատար պիտան եւ յետին քահանայի, թագաւոր եւ փոյն գրչի Յուսկան գրել զայս լայն եւ ընդարձակ գրով, որպէս զի զիւրընթերցի իւր եւ բազմաց եւ իմ ըստ կարողութեան հնազանդ գոյով սմին յազաւս հայրենի եւ բնական սիրոյն որ առ սա եւ բազում բարեբարութիւն գտեալ ի ամանէ, իրրեւ հայր ի վերայ որդւոյ, ըստ ըզձալի տենչմանն ի փափափագ աստուածսիրութեան սկսայ եւ ետափափագ աստուածսիրութեան սկսայ եւ կատարեցի ողորմութեամբն Քրիստոսի, ի թուականիս Հայոց ՈՂԶ (1237) ի դիտապետութեան Տեանն Կոստանդեայ եւ ի թագաւորութեան քուերորդւոյ սմին բարեպաշտ թագաւորիս Հեթմոյ, ի սուրբ ուխտս Սկեւոայ, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս եւ Մաւր իւրոյ Աստուածածնին եւ կենսունակ եւ քրիս-

տոսասեւեւ սուրբ Խաչիս... Արդ դամե- նեսեան աղաչեմ... զվերոյ յիշատակեալ բա- րեպաշտ եւ աստուածասէր իշխանաց իշ- խանս մեծապատիւ սեւաստաւս յիշեալիք ի Գրիստոս հանդերձ աստուածապարզեւ տղա- յաւք իւրովք, որ անուամբ յորջորջին Հե- թում եւ Աւչին, եւ դատերաց Կեանին եւ Թէֆանոյի եւ Շահանդուխտին, որում տացէ... (Հանդ. Ամս. 1954, էջ 69—71, Ձեռագիրը կը պատկանի Պ. Ժազ Մաթո- սեանի):

ԺԱ. Գրեցաւ (Աւետարան) հրամանաւ եւ բաղձացմամբ հոգեկիր եւ խաչագղեաց եւ աստուածահաճոյ եպիսկոպոսի եւ կրօնաւորի տէր Երեմիայի... եւ գրեցաւ ի լաւ յընտիր աւերինակ Տեառն Յովհաննիսի կաթողիկոսի Աւետարանէն, զոր էր ընտրեալ եւ հաճեալ բանիւ եւ բառիւ ի հոչակաւոր անապատէն որ Սիւեւա կոչեն... եւ գրեցաւ ի թուիս ի ՈՂԲ (1243) ի հայրապետութեան Տեառն Կոս- տանդեայ սրբոյ եւ առաքինւոյ... յիշմամբ եւ աղաւթիք մասնակից համարեցուք դաս- տուածազարդն զտէր Երեմիայ եւ զանպիտան զրիչս զԱռաքել երէց... (Բիւզանդիոն 1902, Թ. 1725):

ԺԲ. Փառք... աւարտեցաւ... սուրբ Աւետարանս... ձեռամբ յոքնամեղ քահա- նայ Ստեփանոսի ի թուականիս Հայոց ՉԺԲ (1263) ի մեծ ժողովարանս Սիւեւայի ընդ հովանեաւ սուրբ Փրկչի եւ մաւր իւրոյ Աս- տուածածնի եւ կենսունակ սուրբ Նշանի, մերձ յանմատոյց զղեակս Լամբրունի, որ է ի զլուխ Տաւրոսի եւ ի ստորոտս մեծի լե- բին Տաւրոսի: Ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ Հայոց հեղինակի եւ յառաջ- նորդութեան սուրբ ուխտիս Տեառն Մխի- թարայ եպիսկոպոսի եւ ի թագաւորութեանս Հեթմոյ բարեպաշտի: Ի խնդրոյ սրբասէր քահանայի հայրապետի սպասաւորի սուրբ խորհրդոցն, որ բաղձալի սիրով ետ գրել զաւետարանս ի վայելունս անձին իւրոյ եւ յիշատակ հոգւոյ... Եւս առաւել աղաչեմ զանպիտան եւ զախմար եւ զփոքուն զրիչս Ստեփաննոս բարւոյ յիշատակի արժանի առ- նել... եւ զձեռացեալ հաւերգայրս իմ գթո- րոս զանուցիչ մեր գասնել ողորմութիւն ի Տեառնէ. (Ակինեան Հ. Ն., Հաւաք Յիշատ. Երեւան, Թ. 84, մագաղաթեայ բոլորագիր Աւետարան):

ԺԳ. Մանրուածուք գրեալ ի թուին ՉԻԱ (1272) ձեռամբ Ստեփաննոսի քահա-

նայի ի խնդրոյ Գրիգոր քահանայի... ի յի- շատակ... սնուցչին իւրոյ հոգեւոր Տեառն եւ վարժապետի Տէր Սիմէոնի առաջնորդի սրբոյ ուխտին Սիւեւայ, ուր եւ աւարտեցաւ զիրս ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս եւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Նշանի. ի հայրա- պետութեան Տեառն Յակոբայ եւ յարքայու- թեան Ղեւոնի որդւոյ Հեթմոյ... (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երուս., Թ. 1654):

ԺԴ. Փառք ամենասուրբ Երրորդու- թեան... Որ տայ «գաւրութիւն յինքն հայե- ցողաց ի ներհակ եկամտիցն պարսպել զան- ձինս եւ բնաւորական արարչագիրն հետեւիլ սահմանի, յորոց մի է եւ այժմու յիշատա- կեալ պատուական քահանայս Յովհաննէս, զի յետ ամենայն բարեաց առեալ մանուկ մի ի տհաս հասակի եւ հայրական խնամով անոյց աստուածային երկիւղին վարժեալ անուն Կոստանդին: Եւ իրբեւ եհաս յաւտի- ճան քահանայութեան, կամեցաւ զի անմո- ռաց պահեսցէ զնա ի սրտէ եւ փոխանակ աշ- խատութեան, արխուր հատուցէ նմա մա- սամբք աղաւթից եւ պատարագաց եւ ի թուիս ՉԻԹ (1275) ի հայրապետութեան Տեառն Յակոբայ եւ ի թագաւորութեան Լեւոնի որդւոյ Հեթմոյ: Յորում ըստ մեղաց մերոց զաւրացեալ անաւրէն իշխանն հարա-ւոյ տէրն Մարայ ելեալ աշխարհս Կիւլիկեց-ւոց բազում զաւրաւք եւ ի սուր սուսերի մտչեալ զընակիչս զաւառիս եւ զքաղաքս եւ զգեաւոյս հրոյ ճարակ արալեալ եւ անթիւ- բազմութիւն մարդկան ի զերութիւն վարեալ եւ բազում աւարաւ ողջանդամ յաշխարհ իւր գարձաւ: Եւ փնայեալքս ի լեբինս եւ ի ձեռպս վիմաց յահէ անաւրինին այսր անդ՛ զեզերեալ ակն ունելով ողորմութեան եւ խնամոցն Աստուծոյ: Արդ յայսմ ի դառն եւ յանպրոպ խռովութեանս եւ յանփարա- տելի արամութեանս գրեցաւ երաժշտական տետրս (Մանրուած) ձեռամբ բազմամեղ քահ. Ստեփաննոսի ի հոչակաւոր անապատս Սիւեւայ, որ է մերձ ի զղեակս Լամբրունի եւ ի ստորոտս լեբինս Տաւրոսի: Ի խնդրոյ յառաջ առացեալ սրբազան քահ. Յովհաննիսի եւ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ի վայելունս հոգեւոր որդեկին իւրոյ Կոստանդեայ: Արդ աղաչեմ զամենեւեան որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ տեսակաւ կամ զաղափար առ- նելով. յիշեալիք ի Գրիստոս զվերոյ ասա- ցեալ պատուական քահանայն Յովհաննէս եւ զԿոստանդին եւ զձեռագրն իւրեանց: Յի-

չեալիք աղաւթիւք եւ զպատուելի քահանան Թորոս, որոյ այժմ խնամարկ ստացաւ զրոյս: Ընդ նմին եւ զանպիտան զրիչս եւ զձեռագրն իմ եւ որ ընդունողն...» (Միւր- մէկեան Արտ. Արքեպ., Յուց. հայ. Չեռ. Հա- լչպի Ս. Քառասունք Եկեղեցւոյ եւ մասնա-ւորաց, Երուսաղէմ 1935, Ա. հար., էջ 243—244):

ԺԵ. Փառք... գրեցաւ առաջարան եւ տետրակս Մանր ուսման ի թուիս Հայոց ՉԻԷ (1278) ի հայրապետութեան Տեառն Յակոբ-այ եւ ի թագաւորութեան Լեւոնի որդւոյ, ի հոչակաւոր անապատս Սիւեւայ, ընդ հո- վանեաւ սուրբ Փրկչի եւ մաւր լուսոյ Աս- տուածածնի եւ կենսակիր սուրբ Նշանի մերձ յանմատոյց զղեակս Լամբրունի որ է ի զլուխ Տաւրոսի եւ ի ստորոտ մեծ լեբին Տաւրոսի, ի լաւ եւ յընտիր աւերինակաց, ձեռամբ բազ- մամեղ քահանայի եւ անպիտան զրչի Ստե- փանոսի: Ի խնդրոյ պատուական հոգեւոր փանոսի: Ի խնդրոյ պատուական հոգեւոր եղբաւր մերոյ եւ ամենախմաստուն քահա- նայի Ստեփանոսի որ ստացաւ զսա ի վայելս սրբասէր անձին իւրոյ եւ ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ձեռոց իւրոց: Արդ աղաչեմ զա- մենեւեան որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ տեսակաւ կամ զաղափար առնելով, յի- շեալիք ի Գրիստոս զյառաջասացեալ պա- տուական քահանայ Ստեփանոս ստացող տա- ուիս եւ աստուածասէր ձեռագրն իւր եւ զհա- ռազատ եւ եղբարն իւր զԿոստանդին եւ զԵրասէր նորընծայ քահանայն Կիւրակոս եւ զՅովսէփ սարկաւազ, հանդերձ աղգատոհ- միւն իւրեանց: Եւս առաւել աղաչեմ յիշել ի Տէր զինամաւղ եւ զուսուցիչ սոցա զպատ- կաւելի քահանայն եւ զպատուելի ձերուին Դաւիթ: Ընդ նմին եւ զամենամեղ զրիչս Ստեփանոս<sup>5</sup> եւ զձեռագրն իմ աղաչեմ յիշել ի Տէր եւ խոշորութեան եւ սղալանացս չիւ- նել մեղազիր, զի այսչափ էր կար մեր... ամէն (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջ 759, հմմտ. Յովսէփեան, Քարտէյ հայ հնագրութեան, էջ 39 եւ Տխտ. ԾԶ):

ԺԶ. Փառք... Որպէս եւ զերասպա- տուեալս ծայրագոյն իշխանութեամբ ի բարի արմատոյ մեծափառ թագուհին Հայոց Կե- ոան զուստր իշխանաց իշխանին Հեթում Աերաստաւի որոյ զերկիրն աստուածային ինքն ամփոփեալ զգլուխ եւ զսկիզբն ամե-

<sup>5</sup> Եղբ. 1280ին Թորոսի համար Աւետարան մը կը գրէ (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջ 2630):

նայն իմաստութեան եւ ըստ ամենայն բարե- գործութեան իւրոյ խորհուրդ բարի ի միտ արկեալ, ետ գրել զքառավտակ սուրբ Աւե- տարանս, ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ձեռ- զաց իւրոց եւ բնաւ զարմից, կենդանեաց եւ ի լուսաւորութիւն մանկանց նորածնւոց նոր Սիոնի:

Արդ ով սուրբ հարք եւ առաքելագու- մար դասք քահանայից, յորժամ վայելէք ի քաղցրագուշակ եղեմատունկ աստուածա- ուոյզ վտակաց քառաջեայ հոսանաց կենդա- նական աստուածային աւետարանական բա- նիցս, մանաւանդ յորժամ բառնայք ի վերայ ուսոց ի ժամ սոսկայի պատարազին, յոր- ժամ խաղան ի վերուստ յողջոյն ձեր զաւրք հրեշտակաց եւ սքողեալ ահիւ խառնին ընդ ձեզ, յայնժամ նորին սուրբ աւետարանաւոր եւ միջնորդական կենդանարար սուրբ պա- տարազին յիշեալիք զստացաւ սորին գրա- բեպաշտ թագուհին Կեռան Հանդերձ սուրբ թագաւորան Լեւոնի եւ զձեռագրս իւրեանց եւ զղեարոյս ծիրանածին մանկունս նոցա, զի կենդանիքն սարաղայց ամաւք եւ յերկար զի կենդանիքն սարաղայց ամաւք եւ հան- խաղաղութեամբ անփորձ պահեսցին եւ հան- գուցելոցն հանդիստ եւ ողորմութիւն շնոր- հեսցի յամենապատ բարերարէն Աստուծոյ: Հեսցի յամենապատ բարերարէն Աստուծոյ:

Արդ գրեցաւ զիրս ձեռամբ ամենամեղ քահ. Ստեփանոսի ի թուականի Հայոց ՉԼԲ (1283) ի հայրապետութեան Տեառն Յակոբ-այ եւ ի թագաւորութեան Լեւոնի որդւոյ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս եւ մաւր լու- սոյ Աստուածածնիս, եւ կենսակիր սուրբ Նշանիս, մերձ յանմատոյց զղեակն Լամ- Երուս., որ է ի զլուխ Տաւրոսի եւ ստորոտ մեծի լեբինս Տաւրոսի, յորում ամի բարե- նշան եւ բարեպաշտ անդրանիկ որդին ար- քայիս մերոյ Հեթում զձիււորութեան աստի- ճան ընկալաւ եւ այժմ արիւն աստուածապահ ամաւք ընդ երկար աւուրս անուանի եւ յաղ- թաւ լինել ի վերայ երկրի» (Արձագանք, թաւ լինել ի վերայ երկրի» (Արձագանք, 1886, էջ 278—279 եւ Բարխուդարեան, Ար- ցախ, էջ 39—40, հմմտ. Հանդ. Ամս. 1954, էջ 75):

ԺԸ. Քահանայ ոմն Աստուածատուր ա- նուն հանդերձ ձեռասուն իւր հարազատ պատանուով Խաչատրիւ, որ է սրբի քեռ

իւրոյ, ի դեգերանս աստուածայնոց գրոց գո-  
լով, կանխագոյն յինքնէ ի տղայոյթ վար-  
ժեալ եւ իւրանման կրթասէր բարուց զու-  
գակցեալ, կամօք յերկոցունց յաստուածա-  
հաճոյ զրօսանս անձանց եւ ի աստարութիւն  
բունահարեալ գործոյ ընթերցմանն, եւ յի-  
շատակ բարեաց զկնի ստացան զայս աս-  
տուածախօս մատենան նորոց Կտակարանաց  
ի ձեռն իմոյ նուաստութեանս Ստեփանոսի  
ամենամեղ եւ անպիտան գրչի եւ ներելոյն  
Աստուծոյ տրուպ եւ անարժան քահանայի,  
ի ժամանակս աստուածապաշտ արքայի  
Լեւոնի, որդւոյ Հեթմոյ եւ ի նորուն աս-  
տուածասէր անդրանիկ Հեթմոյ (Բ.) տէրու-  
թեան աստուածապահ բերդիս Լամբրունի  
եւ ի կաթողիկոսութեան աստուածահաճոյ  
կրկին ծերութեամբ պատուեալ Տեառն Յա-  
կորայ ի ՉԼԳ (1285) թուականիս Հայոց,  
գրեցաւ տառս յաստուածապահ սրբարանս  
մեծի ուխտիս Սիւեւայի, ընդ շքով թեւոց  
աստուածագոր սուրբ Նշանիս եւ սրբոյ  
Փրկչիս, յառաջնորդութեան Տեառն Մինա-  
սայ: Արդ մաղթեմք բոլորիցն յԱստուծոյ  
ստացողք գրոցս հանդերձ տրուպ գրչաւս  
եւ մերովքն համայնիւք. եւս եւ զպատուա-  
կան քահանան Ստեփանոս Գոյներ Երիցանց  
եւ զճնտղան նորին...: Այսպիսեալ երանելի  
ըզմիւք առ ստացումն աստուածաշունչ տա-  
ռիցս վառեալ սրբանունդ պատանին Սաչա-  
տուր թելազրութեամբ Գէորգեայ վարդա-  
պետի, առ որում կայր ի վարժս կրթութեան  
բանի եւ գրոց ուսումնասէր զպէրն Սաչա-  
տուր, ինքնագիր երկօք ստացաւ զգիրս  
Ծննդոցն, գրատաւորացն, եւ զԹագաւորու-  
թեանց եւ վասն ոչ բերելոյ տկար մարմնոյն  
գերկս գրութեան, օգտանդակեաց անուցիչ նո-  
րին եւ քեռի աստուածապաշտ քահանայն  
Աստուածատուր եւ սակս աղքատութեան  
կարծեաց նախ զնոր Կտակարանս եւս գրել  
իրբեւ գոյոժ հարկաւորս եւ զարձեալ յԱս-  
տուած խրախուսեալք իմով ձեռամբ Ստե-  
փանոսի Գոյներ Երիցանց փցուն գրչի ստա-  
ցան զաստուածային գիրս սրբոց մարգա-  
րէիցն եւ զսրբազրաց ոմանց յՉԼԷ (1288)  
թուականիս ի միթիթարութիւն ինքեանց  
հոգւով, որոց տացէ Աստուած... (Ալի-

1296ին Ստեփանոս ծեր քահանան կարտագրէ  
Աւետարան մը՝ ընդ հովանեալ սուրբ Փրկչիս եւ կեն-  
սակիր սուրբ Նշանիս եւ մաւր լուսոյ Աստուածածնի,  
որ է առնթիւր անմատոյց զգեկիս Լամբրունի... (յի-  
շէն կր մաղթէ) զաստուածապաշտ եւ զմեղաւոր զճոցս եւս  
եւ զգեղօրորդիս իմ զՅովհաննէս քահանայ եւ զԼեւոն

շան, Հայապատու՝, Բ., էջ 496—497, Լոյս,  
1906, էջ 1166, 1191, 1216):

ԺԹ. Փառք... ըստ որում է եւ այժմօր  
յիշատակեալ քահանայս Թորոս, որ է յաշ-  
խարհէ թագաւորական քաղաքին Կոստան-  
զինուպաւլի, ի գաւառէն որ կոչի Ակուան,  
ի բերդէն որ կոչի Ծիկուան: Եւ յերիտասար-  
գական հասակին թողեալ զճնաւդս եւ զազ-  
գայինս ընդ զտէրունական հրամանն, ու-  
սումնասիրութեան փափագմամբ պանդըրի-  
տեալ յաշխարհս Կիլիկիոյ, շրջելով յանա-  
պատս եւ ի վանորայս եւ առաքինութեան  
վարուք արժանի լեալ քահանայութեան աշ-  
տիճանի... եւ... մեծաւ ըզմիւ ստացաւ  
եղեալ քառալտակ սուրբ Աւետարանիս:

Արդ եղև զըջութեան սորա ի թուակա-  
նիս ՉԼԹ (1290) ի հայրապետութեան առա-  
ջին ամի Տեառն Ստեփանոսի եւ յիշխանու-  
թեան թագաժառանգ ծիրանածին պարոնին  
Հեթմոյ որդւոյ Լեւոնի արքայի ի սուրբ եւ  
ի դերահոջակ ուխտս Սիւեւայ, որ է առըն-  
թեր անմատոյց զգեկիս Լամբրունի, ընդ հո-  
վանեալ սուրբ Փրկչիս եւ կենսակիր սուրբ  
Նշանիս եւ մաւր լուսոյ Աստուածածնի, ձե-  
ռամբ ամենամեղ քահանայի Ստեփանոսի...  
(Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 2630,  
Աւետարան, հմմտ. Հայաստան, 1851, թ. 43):

Ի. Որոց ըզձացեալ... Պետրոս քահա-  
նայ եւ արեղայ եւ հաւաքեալ զճաղիկս գե-  
ղեցիկս եւ զառողջարարս հոգւոց զպատմու-  
թիւն հարցն զվարս ճգնաւորացն եւ զայլ՝  
պիտանիս եւ հոգեշահս ընդ որս եւ զընդդի-  
մակս ընդդէմ երկարնակացն, զի մի բնու-  
թիւն քարոզեցի ըզամբք հոգւոյն եւ բեր-  
կրեցի ի գրօսանս անձին աչաց տեսեան եւ  
սոցէ զպտուղ ի կեանս յաւիտենականս  
ամէն:

Եւ արդ գրեցաւ այս աստուածատունի  
ճառոցս ծաղիկ յաշխարհիս Կիլիկեցոց, ի  
վանքս որ կոչի Սիւեւայ ի գառն եւ ի զժնեալ  
աւուրքս, յորում խուճապ տաղնապի ոչ սա-  
կաւ եւ առ աշխարհիս Հայոց, զի երկրորդն  
Փարաւոն սուլթան Եղիպտոսի եհաս բազում  
զաւրաւք եւ պաշարեաց զմեծ եւ զհոջակելի

սարկաւազ եւ զՅովսէփ պատանի, վասն զի ի ինդրոյ  
սոցին ի պակասեալ ամաց եւ ի զառանցեալ տիտ  
ի ծերութեան հասակի, շնորհօք բարեբարին Աստուծոյ  
աւարտեցի զա... Յիշել ի Քրիստոս եւ զհարազատ  
եղբայրն իմ զԿոստանդին, որ է այն ամի վախճանե-  
ցաւ եւ սուր անբերելի էթող մեղ... (Սիւեւան,  
էջ 533):

զղեակն Հոռոմիկայ եւ յոչ կարել զաւրացն  
Հայոց զգէմ ունել... առ զամբոցն եւ աւա-  
րեաց զաթոռ հայրապետութեան մերոյ եւ  
վարեաց զկաթողիկոսն Հայոց եւ զբազում  
կաթիկոսութեանս եւ զքահանայս եւ զսարկա-  
ւազունս, միանգամայն զարս եւ զկանայս  
բազումս այ վայ է ինձ. եղուկ եմ ես թշուա-  
ռացեալս եւ յաւէտ տրտմեալս: Եւ արդ ի  
վերայ այսր ամենայն չարեաց... զոր ողբս  
առից ի բերան... զոր մեղաւք խաւարեալս  
աչաւք տեսի, եւ ականջօք լուսայ զթշուա-  
ռութիւնս ազգիս, զսրախողոզն իննել եւ  
զվարեկն ի դերութիւն եւ զամենայն չարիք,  
զնախատեկն եւ զհարկանեկն, զորս Տէր Յի-  
սուս ազատեցէ...: Յիշեսջիք ի բարի  
զՊետրոս եւ զճնողքն իւր... ի թվ. Հայոց  
ՉԽԱ (1292) աւարտեցաւ ի փառս Աստուծոյ:  
Կոստանուն արեղայս Յոհան աղաչեմ յիշել:

Չնուաստս զՍարգիս գրիչ աղաչեմ, ով  
Պետրոս քահանայ յաղօթս քս յիշել (Ակի-  
նեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Տէր Աւետի-  
սեանի Նոր Զուգայի Չեռ. Յուցակէն, թ. 415,  
ձառընտիր):

ԻԱ. Ծնորհք եւ զոհութիւն... Քահա-  
նայ ոմն վանական սրբասէր ի սուրբ ուխ-  
տէն Արքայնակաղնոյ Յովհաննէս անուն կա-  
մեցաւ ստանալ զսուրբ Աւետարանս ի յիշա-  
տակ... այդ մինչդեռ զմազաղաթն եւեթ  
պատրաստեաց ժամանեաց նմա վախճան  
մարմնոյ եւ զնալոյ առ Աստուած: Իսկ ըստ  
հոգւոյ եւ մարմնոյ հարազատք նորին եւ  
անդակիցքն համակարք Ստեփանոս փիլիսո-  
փայ եւ Գրիգոր քահանայք, խորհուրդ առին  
լնուլ զառաջարկեալն ի Յովհաննէ եղբարէ  
Իւրեանց: Առեալ զնիւթ պատրաստեալ յեղ-  
բաւրէն իւրեանց եկին ի հոջակաւոր ուխտն  
Սիւեւայ, զի ի ձեռն զըջացն որ անդ կատա-  
րեցեն զփափաղն իւրեանց գրութեամբ  
սուրբ Աւետարանիս: Այլ ընդ հասանին  
տեւեցաւ զկնի նախագնացելոյն Յովհաննիսի  
եւ աւանդեաց Գրիգորի շթողուլ անկատար  
զըզձային իւրեանց: Իսկ ապա Գրիգորոյ  
թախձեալ զիմ անարժանութիւնս զՍտեփան-  
նոսի գրչի եւ իմ յանձին կալեալ շնորհաւք  
Աստուծոյ յանկ հանի զսուրբ եւ զաստուա-  
ճաւանդ Աւետարանս, ըստ տկար չարիոյ  
սկարութեանս, զառանցեալ տիտց եւ պակա-  
սեալ ի պատշաճ պիտոյից այսր արուեստի  
պաքան կարացի ընուլ զտեսչանս վախճանե-

լոցն ի Քրիստոս Յովհաննիսի եւ Ստեփա-  
նոսի եւ կենդանոյ եղբարս նոցա Գրի-  
գորի: Զի լիցի սա յիշատակ բարի եւ բա-  
րեխաւս առ Քրիստոս ննջեցելոցն այնոցիկ  
եւ կենդանի զարմից զնոցին, մանաւանդ  
Գրիգորի, որ եւ գրել եւ հաւերեղբարց նոցին  
քահանայիցն Թադէոսի եւ Մեծ երիցու, եւս  
եւ բնաւ արեան մերձաւորաց իւրոց եւ ինձ  
տառապեալ գրչիս Ստեփանոսի եւ իմոց յի-  
շատակ ի բարին...:

Գրեցաւ ի սուրբ ուխտս Սիւեւայ ընդ  
հովանեալ աստուածընկալ սրբութեանցս ի  
մեծ թուիս ՉԽԲ (1293), յորում վարէր զար-  
քայական տէրութիւնն աշխարհիս Կիլիկեց-  
ոց աստուածասէրն Հեթում, որդի Լեւոնի,  
որդւոյ Հեթմոյ, որոց ժամանեցէ աւանու-  
թիւն Աստուծոյ անշէջ մնալ ճրագի տանն  
Թուրքիկանց ի փառս Աստուծոյ, որ է աւրհ-  
նեալ յաւիտեանս. ամէն (Լալայեանց, Յուց.  
հայ. Չեռ. վասպ., թ. 61, Աւետարան,  
էջ 111—112):

ԻԲ. Փառք... Գրեցաւ քառալտակ  
սուրբ Աւետարանս ի թուիս Հայոց ՉԽԳ  
(1295) ի հայրապետութեան Տեառն Գրիգորի  
եւ յիշխանութեան Հեթմոյ որդւոյ Լեւոնի.  
ձեռամբ ամենամեղ քահանայի Ստեփանոսի  
ի սուրբ մենաստանս Սիւեւայ ընդ հովանեալ  
սուրբ Փրկչիս եւ կենսակիր սուրբ Նշանիս  
եւ մաւր Լուսոյ Աստուածածնի, որ է առըն-  
թեր անմատոյց զգեկիս Լամբրունի:

Արդ աղաչեմ զամենեանս, որք ընթե-  
նոյք զսուրբ տառս եւ լուսաւորիք ի սմանէ,  
յիշեսջիք ի Քրիստոս զաստուածալ եւ զմե-  
ղաւոր զճաւղս: Եւս եւ զեղբարս որդիսս իմ  
զՅովհաննէս քահանայ եւ զԼեւոն սարկաւազ  
եւ զՅովսէփ պատանի, վասն զի ի ինդրոյ  
սոցին ի պակասեալ ամաց եւ ի զառանցեալ  
տիտց եւ ի ծերութեան հասակի շնորհաւք  
արեղարին Աստուծոյ աւարտեցի զսա յիշա-  
տակ ինձ եւ ճնողաց իմոց եւ ի վայելումն  
տակ ինձ եւ ճնողաց իմոց: Դար-  
յառաջասացեալ արեան մերձաւորացս: Դար-  
ձեալ կրկին աղաչեմ յիշել ի Քրիստոս եւ  
զհարազատ եղբայրն իմ զԿոստանդին, որ է  
սոցն ամի վախճանեցաւ եւ սուր անբերելի  
սոցն իմ զԿոստանդին, որ է այն ամի վախճանե-  
ցաւ եւ սուր անբերելի էթող մեղ... (Ակինեան Հ. Ն.,  
զիւց մանկանց նորին... (Ակինեան Հ. Ն.,  
Հաւաք. Յիշատ. Պարիս թ. 19, Աւետարան,  
հմմտ. Սրբանձտեանց, Թորոս Աղբ., Բ.,  
էջ 334—335):

ԻՊ. ՉՅովհաննէս Լամբրունացիս զծաղկաւ խորանացս աղաչեմ յիշել յաղաւթս, ով դասք լուսեբամից:

Փառք... որ եւ զիմ տկարութիւնս զօրացոյց հասուցանել զաստուածախաւս գիրս զամենահոշակ մարգարէին Եսայայ եւ զպայծառ քարոզչին տիեզերաց զԱռաքելոյն Պաւլոսի ի փարթաժութիւն ճոխութեան աստուածաբանակ տաճարի սուրբ Փրկչիս մեծի ուխտիս Սկեւոյի կամաւք բարեւիրաց ոմանց հարազատ որդւոց այսմ սրբութեան: Որք իբրեւ իմաստունք եւ փորձք, զստացուած աստուածեան գրոցս ի գանձս այսր Եկեղեցւոյ հասարակաց եւ մտացական բարի գիտելով աստուածասէր եւ եղբայրասէր խոհմամբ ստացան գգիրս զայս ի ձեռն տկար գրչիս Պետրոսի տրուպ քահանայի այսպիսի աւրինակաւ: Քահանայ ոմն Ստեփանոս անուն յաշխարհէն Լիկոնացոց ի նշանաւոր մայրաքաղաքէի Յիկոնիոյ ի պարկեշտ աշխարհավարութենէ զեւ լաւագոյն ընտրեալ, ասեմ զխաղաղակ կենցաղ, ելեալ ի ծննդավայրէն եւ զետեղեցաւ ի խումբս սրբազան միաբանելոց յուխտս սուրբ, յոլով ժամանակս վարեալ եւ ծերացեալ ի պաշտան եւ ի սպասաւորութիւն Եկեղեցւոյ, նաեւ ըստ պիտոյից հասանելոյ երանելով եւ մտանելով նպաստաւորէր հնազանդութեամբ ըստ իւրոյ կարգին: Որ եւ զիս զիծուն գրչիս Պետրոս, որք ի ծնողաց, ընկալեալ սնոյց եւ ուսոյց, զի եղբայր իւր էր հարազատ հօրն իմոյ ըստ մարմնոյ, որով կրկնակի բարեգործէր ինձ պաշտպանելով: Որոյ զկնի մահուանն, որք հոգաբարձօք էին կտակին, Կոստանդին փակակալ եւ միւս Կոստանդին եւ Թորոս, ի մնացելոց գոյից նորա պատրաստեցին նիւթ եւ ծախս պիտոյց գրոցս եւ հրամայեցին ինձ Պետրոսի գրել զսուրբ գիրս յիշատակ բարեաց հօրեղբորն իմոյ Ստեփանոսի եւ իւրոցն ամէնից, զի առ ձեռն կացցէ ի պէտս ընթերց յեկեղեցիս յաւուրս կիւրակէից զիշերի եւ ի ժամ սուրբ պատարագին: Եղև այս թուականին ՉԽԵ (1296): Արդ հանձարեղ փերձանդաց եւ միամիտ լսողացդ միթարելոցդ աստուածաբան վարդապետութենէ սուրբ մարգարէին եւ առաքելոյն ի սոսկալի խորհրդածութեան մեղաքաւիչ պատարագին աստուածասէր ժառանգորդացդ սուրբ Եկեղեցւոյս եւ փերինն արքայութեան, սուրբ հարցդ եւ եղբայրդ յերեսս անկեալ տառապեալ գրչիս մաղթեմ, սրտի մտօք յիշատա-

կել ի սուրբ յաղաւթս ձեր ընդունել ի ժամու սուրբ պատարագին զՍտեփանոս քահանայ որոյ ծախիւք գրեցաւ գիրքս: Եւս եւ զառաջարկողսն նիւթոյս զնախ յիշեցեալսն: Ընդ նոսին եւ զտառապեալ Պետրոս հանդերձ ծնողօքն եւ զարմիւքն եւ զՍիմէոն քահանայ, որ բազում խնամօք սպասաւորէր մեզ ի գրութիւն գրոցս եւ բարեբարն Քրիստոս ընդ յիշելոցս եւ ընդ յիշողացդ ողորմեցի ի փառս անուան իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն» (Արեւելք, 1908, Թ. 6795 Սիսուան, էջ 106):

ԻՊ. «Փառք... Ի թուարեութեանս Հայոց ՉԽԶ (1298) ի թագաւորութեան Կիլիկեցւոց նահանգիս Սմայտա եւ ի դիտապետութեան Հայոց Տեառն Գրիգորի, ի մեծ ժողովարանս Սկեւոյ, ընդ հովանեաւ սուրբ Փրկչի եւ մաւր իւրոյ Աստուածածնի՝ Եւ կենսունակ սուրբ Նշանի մերձ յանմտոյց զգեակս՝ Լամբրոնի. աւարտեցաւ աստուածատունիս այս հոգիարողոջ քառավտակ սուրբ Աւետարանս, որ յեղեմական գրախտէն հոսեալ... Արդ ցանկացող եղեալ այսմ սրբոյ Աւետարանիս բազմամեղ եւ անարժան քահանայի Ստեփանոսի եւ մականունն Իրից որդի, թէպէտ եւ ոչ էր արժանակս (°)՝ ձեռնտու այսմ արհեստի ի բազում եւ ազգէ ազգէ վշտաց ի ներքին եւ յարտաքին թշնամեաց եւ ես թէպէտ եւ զառանցեալ տխուք եւ պակասեալ ի զաւրութենէ եւ ի պատշաճ պիտոյից այսքան կարացեալ ընուլ գտնելանս իմ: Արդ յերեսս անկեալ աղաչեմ զամենեւեան, որք հանդիպիւք սմա, յիշել աղաւթիւք զգրող սորա զյառաջասցեալսն զՍտեփանոս եւ զծնաւոյն իմ զՂուկաս քահանայ եւ զմայր իմ գթագեր եւ զեղբարսն իմ զԳրիգոր, զՎասիլ, զՀայրապետ եւ զԿոստանդին եւ զ... ոին իմ զՀայրապետ քահանայ եւ զամենայն ազգատունս իմ, նաեւ եւ զեղբարք սրբոյ մենաստանիս Սկեւոյի որ են այժմ կենդանի եւ որ գալոց են զկնի հանդերձ ծնողաք եւ ազգականաք յիշեսցիք ի Քրիստոս: Չի յայս սակս ի բաց եզի զծերութեան անկարութիւն, զի շահեցայց ի ձէնջ զողորմութիւն եւ զչնորհս, զի թերեւս գտից թողութիւն բազմութեան մեղաց իմոց եւ յուսալով ի հայրական եւ յեղբայրական գութեմ ձեր զյառաջակայ հոգս իմ ձեր սուրբ աղթից յանձին արարի... ամէն» (Բանասէլ՝

7 ժամանակս:

1905, էջ 193—194, անդ, 1904, էջ 84 եւ Մատենադարան, էջ 166, Սիսուան, էջ 107):

ԻԵ. «Այսոցիկ աստուածաւանդ տաւնից կատարմանց ցուցակի համահաւաք ընթերցուածոցս շարադրութեան փափաքաւդս, ես նուաստ յոքունց Կոստանդին, ողորմութեամբ Աստուծոյ երբեմն եպիսկոպոս Քերսոնի եւ ըստ գիրաշարժ փոփոխմանց ժամանակի այժմ առաջնորդ աստուածապահ սուրբ ուխտիս Սկեւոյի, ի միթարութիւն հոգւոյ ինձ եւ յառաջնորդութիւն պատուոյ ամենասուրբ տաւնից: Ստացայ զսուրբ գիրս զայս սկզբնաւորեալ ի ձեռն սընընդակցի եղբաւր Գրիգորի ուրեմն գեղեցիկ գրչի, որ եւ ընդ աւարտելն զառաջին եւ զերկրորդ հատոր գրոցս, զընթերցուածս ասեմ եւ զգործս առաքելոցն աւետարանան Յովհաննու, անդէն իսկ եւ զըստ մարմնոյ կեանս լքեալ մահուամբ չոքաւ առ Աստուած, որոյ ողորմեցի Քրիստոս:

Իսկ զթերի մնացեալ գերկրորդ հատոր, զժամագիրքս ասեմ, որ եւ ճաշոց կոչի, ի ձեռն այլոց ոմանց ետու աւարտել, ի փառս տաւնեցելոցն Աստուծոյ եւ աստուածայնոցն եւ ինձ ի կեանս ի ստարութիւն յաստուածայինսն եւ յետ աստի ելլիցն ինձ եւ իմոցն ի բարեխաւսութիւն առ ողորմածն Աստուած, որոյ ողորմեցի Քրիստոս:

Եղև կանտարունս գրոցս Հայոց ի մեծ թուիս ՉԽԸ (1299) յարքայութեան Հեթմոյ որդւոյ Լեւոնի եւ հայրապետութեան Տեառն Գրիգորի, զորս Տէր պահեսցէ յերկար: Արդ աղաչեմ... յիշել... զիմ նուաստութիւնս Կոստանդին եպիսկոպոս, եւս զի Քրիստոս հանդուցեալ քեռին իմ Յովհաննէս կարմիր վանեցի... զբարի հոգի մայրիկն իմ զԱղուոր տիկին եւ զհայրն իմ Վասիլ եւ զարեամբ նահատակեալ եղբայրն իմ Սարգիս... եւ զանդակից եղբայրուկն իմ եւ զերզակից որդեակն զՍտեփանոս վանական քահանայ, որ արեամբ կատարեցաւ ի սպասաւորութիւն սրբոյ ուխտիս եւ իմ. զի մինչեւ յաւր մահուան իւրոյ բազում խոնջս եւ վաստակս մարմնոյ կրեաց վասն մեր, որում Տէր հասուցցէ զանսպառ բարիսն...» (Ակիւնեան չ. Ն., Հաւաք. Յիշատ. Երուսաղէմ, Թ. 454. Հմմտ. Աւետիք, 1941, էջ 60):

ԻԶ. Քրիստոս Աստուած... ողորմեա մեղապարտ ծառային քո Կոստանդեա քահանայի եւ հանդուցեալ աստուածասէր հաւր իւրոյ Յովհաննիսի քահանայի... որ ստացաւ

զաւ (1316ին) յարգար ընչից իւրոց ի վայելումն անձին իւրոյ ի յիշատակ հոգւոյ իւրոյ, որ արժանաւորէք բարի յիշմամբ զստացաւդս եւ զանարժան գրողս Սմբատ սուտ քահանայ...:

Քրիստոս Աստուած ողորմեա ստացաւդ տառիս Կոստանդեա քահանայի եւ ծնաւոց իւրոյ եւ ամենայն եղբարց մենաստանիս Սկեւոյիս եւ ծնաւոց նոցին:

Զսրբազան ընթերցողդ եւ զյսաւղդ աղաչեմ յիշել աղաւթիւք զստացաւդ սորա զԿոստանդին քահանայ եւ զիս զանարժան աշխատողս զՍտեփանոս իրիցորդի եւ զծնողսն իմ (Պաշիկեան, ԺԳ. Դարի հայ. Ձեռ. Յիշատականք, էջ 123—124. Հմմտ. անդ, էջ 107՝ Յիշատակագրութիւն մը Կոստանդին Պեհեսնացիի մասին, որ առաջնորդ եղած է Սկեւոյի — այդ անուամբ է Լալայեանցի Վասպուրականի հայ Ձեռ. Յուցակէն, էջ 59—60):

ԻԷ. 1322ին գրուած Յիշատակագրութեան մը մէջ, զոր յառաջ պիտի բերեմ կամրիկ վանքի մասին զրած տունս, կը յիշուի Ստեփանոս Սկեւոցի (Ակիւնեան չ. Ն., Հաւաք. Յիշատ. Թ. 1322):

ԻԸ. ա. Ստեփանոս զպիւր 1324ին յանպատս Սկեւոյ ընդ հովանեաւ սուրբ եւ փրկագործ Նշանիս եւ Աստուածածնիս կը գրեմ հատընտիր վարք սրբոց մը (Սիսուան, էջ 107): Հաւանօրէն նոյն վանքի մէջ կը գրուի Սաղմոսարան մը, որ արք Ս. Ղազարի Մատենադարանին մէջ կը պահուի (Սարգիսեան, Մայր Յուցակ, Ա., էջ 207):

Բ. Փառք... որպէս եւ ապա գերջանիկս իմաստս Արրահամ ծերունի, ճշմարտին Աստուծոյ կրանաւոր... զայս ընտրեաց սեփական ժառանգութիւն եւ ստացաւ... վարք անստուածընկալ աւետարանչին Յովհաննու ստուածընկալ աւետարանչին Երզնկայի տեսչանչի զստմութիւնս եւ սոսկալի տեսչանս յայտնարանութիւն... յարգար վաստակոց իւրոց...: Գրեցաւ ՉԶԳ (1324) յաստուածընկալ ընդ հովանեաւ սուրբ եւ նապատս Սկեւոս ընդ հովանեաւ սուրբ եւ փառս Միածնի: Յիշեցէք ի Քրիստոս զմեղուցեալ գրողս զՍտեփանոս... (Պաշիկեան, ԺԳ. Ղաբի հայ. Ձեռ. Յիշատ., էջ 191):

ԻԹ. Փառք... երանելի քահանայս Սարգիս... ստացաւ Աւետարանս... յիշեցէք ի բարին Քրիստոս եւ զծնաւոյն իւր զՄարտիրոս եւ զՄամատիկին... աղաչեմ եւ ես մե-

դաւորս Յովհաննէս չարահիւսաւորս... յի- շել յաղաւթս...: Գրեցաւ ՉՀԴ (1325) ի թա- գաւորութեանն Լեւոնի եւ ի կաթողիկոսու- թեան Կոստանդնի, յանապատն Սկեւոյ ի լաւ աւրինակէ (Լալայեանց, Յուց. Հայ. Ձեռ. Վասպ., էջ 171. Հմմտ. Խաչիկեան, ԺԴ. դարի Հայ Ձեռ. Յիշատ., էջ 196):

Լ. Փառք... Ես մեղաւորս եւ չար ծա- ույս բարի արարչին, խարխեալս յաչաց եւ ի մտաց, չարահիւսեցի զգիրս եւ ընծայ նուի- բեմ սուրբ Հրեշտակապետացն որ յերուսա- ղէմ: Աղաչեմ զժառանգողսք անեղբ իմ մե- ղաց թողութիւն յԱստուծոյ խնդրեցէք եւ ծնաւորացն իմ եւ որք աշխատեցան ի սա...: Եւ որ ողորմի մեզ եւ ինքն հանդիպի բարի մասին եւ բնակիչք սուրբ տեղոյդ առաջինք եւ այժմուս եւ որ այլ զան շնորհիւն Քրիս- տոսի մխիթարչին: Եւ որ սրտիւ լիով առէն Տէր ողորմի եւ ամէն: ՉՀէ (1328): Ի Սկեւ- ույ անապատս (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երուսաղէմ, Թ. 97, ձառնարկ եւ Վկայարանութիւն, գրուած Յովհաննէսէ. Հմմտ. Սիւրմէեան, Մայր Յուց. Երուսա- ղէմի, Ա., էջ 236):

ԼԱ. Փառք... Նա ես մեղաւոր հոգս ովեկս եւ քայքայեալս յամենայն բարեաց գործոց տառապեալ ոգիս, ստուերս քահա- նայից Գրիգոր: Ըղձայցայ այսմ բարի գործոյ եւ մերձեանայ ի գիրս սուրբ, թէպէտ եւ անվարժ էի յարհեստէ գրոյս յաչս եւ յայլ անդամս մի աւր գրելով եւ երկուս կամ աւելի ի վտանգէն կոծեալ տաղնապէի: Սակս այնորիկ խոշոր եւ անհաւասար եւ թէ այսպէս եւ կամ այն ի սուրբ Հոգւոյն շնոր- հաց յանկ հանեալ կատարեցի զսակաւ գիծս Պաղտար իմով մեղաւոր ձեռաւքս ի վայե- լունն անձին իմոյ եւ յիշատակ ծնաւորաց իմոց եւ զարմից: Եւ առ ոսոս անգեալ աղա- չեմ զամենայն հանդիպողսք այսմ շնչին գծի մանաւանդ որ ժառանգէք իսկ, սղալանացս որ ի սմա ներեցէք եւ խոշորութեանս մեղ մի գնէք, զի չէ ի կամաց եւ բարի յիշատակի արժանի արարէք: Եւ Աստուած, որ առանն է ի սուրբ բարեաց ձեզ յիշողացդ եւ մեզ յի- շելոցս ողորմեացի եւ որ սրտի մտաւք ամէն սակ:

Արդ գրեցաւ սա ի սուրբ ուխտս Սկեւ- ույ ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս եւ կեն- սունակ սուրբ Նշանիս եւ Մաւր Լուսոյն սուրբ Աստուածածնիս: Ի գառն եւ զժնդակ ժամանակիս ի թուականիս Հայոց ՉԳԼ

(1349) ի հայրապետութեան Տեառն Մխի- թարայ եւ ի թագաւորութեան Կոստանդեա: Ո սրտալի եւ դառն ժամանակիս, զի յազդ- մանէ չարին յարուցեալ անաւրինաց ի վերայ քրիստոնէիցս եւ ի սուր սուսերի մաշեցին զազգս մեր ուր եւ ուր մնացեալ յամբոցնիս սակաւ ի հաւատացեղոցս Աստուծոյ:

Եւ ի յայսմ ամի էր աւր Ը. էր Յուլիոս ամոսոյ ի տակք ամբոցիս սրախոհ արարին երկուս յեղբարց մերոց<sup>8</sup> (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. 1349, Պաղտար):

ԳԿՏ. Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ԱՆՈՒՆՈՒԹԵԱՆ ԳԵՐԳԵՍԵԱՆ

(Շարունակութիւն):

Մանուկ Ալլահվերտեան, ըստ Բաճեանի, ապրած է «մօտ ութսուն տարի<sup>58</sup>»: Իր մա- հուան բուականը պիտի ըլլար հետեւարար 1756 + 80 = էրբ 1836: Մինչ ըստ Գալէմ- քեարեանի՝ Մանուկ Ամիրա մեռած է 1820— 1825ին: Ինչպէս Ասկէրեանի քով տեսանք՝ Մըսթըբեան Գերապայծառի մահէն վերջ՝ Մանուկ Ալլահվերտեանի տունը ազգային ժողով տեղի կ'ունենայ, ուր հարկաւ ինքը ներկայ է: Մըսթըբեան Գերապայծառի մահը տեղի ունեցած է 1824 Սեպտեմբեր 2ին<sup>59</sup>: Իսկ ազգային ժողովը տեղի ունեցած է, ըստ Ասկէրեանի, Մըսթըբեանի մահէն յետոյ՝ «ժամանակէ մը ետքը»<sup>60</sup>: Ասով գրեթէ հա- սած կ'ըլլանք 1825ին, երբ տակաւին ողջ էր Մանուկ Ալլահվերտեան: Իր մահը տեղի ու- նեցած կրնայ ըլլալ հետեւարար 1825— 1836ին:

Մանուկ Ալլահվերտեան իր յառուկ գե- րեզմանատեղին եւ դամբարանը ունեցած է Բերայի Հայոց գերեզմանատան մէջ, ուր եւ թաղուած է ինքը եւ հաւանորէն իր Տիկիւնը եւ որդիքը: Հ. Գրիգորիս Վ. Գալէմքեա- րեան՝ խօսելով Բերայի Հայոց Գերեզմանա- տան վրայ՝ առիթով մը կը շնորհակալ լինի իր յառուկ դամբարանը ունի Ալլահվերտեան

<sup>58</sup> Սկեւոյի մէջ գրուած Ձեռագիրներու եւ գրէջ- ներու մասին Հմմտ. Նորայոյն գրութիւն մը Ա. Երե- մեանէ, Հասի 1954, էջ 97: <sup>59</sup> Անդ: <sup>60</sup> Հանդէս Ամսօրեայ, 1953, էջ 244: <sup>61</sup> Անդ, էջ 18:

Մանուկ սա՛ նշանադրով. «Կարնեցի Մանուկ Աստուածատուրեան», եւ թէ ան եղած է «Կարնդիկէ Հայոց գլուխն եւ առաջիննն ան- ցուկն. իր հաւատքին համար երկու անգամ ախտորուած» եւ «իբր 1820—1825ին վախճա- նած եւ այնտեղ (Բերայի գերեզմանատունը) թաղուած» է<sup>61</sup>:

Բ. Մատթէոս Ամիրա Ալլահվերտեան: Մատթէոս Ամիրայի կեանքէն հետեւեալ գծերը միայն ծանօթ են.

Ծնած է 1764ին Կարնոյ Հինձք գիւղը եւ վաճառականութեամբ զբաղած իր եղբոր՝ Մանուկ Ամիրայի հետ ըլլալով «հարստու- րեամբ եւ անուամբ շատ հռչակեալ Կարնոյ մէջ»: Գործի ընկերն եղած է Կարնեցի Մկրտիչ, որուն մահուան առթիւ կը գրէ Բէօլէեան. «1816 Մարտ 9. Վախճանեցաւ Երզրուցի Մկրտիչ ազան, որ էր նա եկեալ Ընտանեօք ի Կարնէ եւ օրքալս Մաթոս ա- ղային. սա 50 ամաց գորով, հիւանդութեան պատահեալ էր յերկար ժամանակաց. Հան- դիսութիւն թաղման սորա եղեւ 4 վարդա- պետօք, 40 տէրտէրօք եւ բազմութիւն ժո- ղովրդովք...»<sup>62</sup>:

Մատթէոս Ալլահվերտեանի Պոլսոյ գրա- սենեակը նոր համի մէջն էր<sup>63</sup>, իսկ Թարա- պիա ունէր փառաւոր տուն եւ պարտէզ: Իր գործը սեղանաւորութիւն ըլլալով՝ սեղա- նաւորն եղած էր Եպարքոսին, ունենալով զայն պաշտպան եւ նեցուկ: 1820 Յունուար 5ին (ն. տ.) Եպարքոսը կը փոխուի, որով Մատթէոս կը կորսնցնէր կարեւոր նեցուկ մը թէ՛ իր տան եւ թէ՛ Կաթողիկէ Հայոց հա- մար:

Մատթէոս Ամիրա եղբոր ենթարկուած կրօնական հարածանքներէն մասամբ գերծ- եղած է: Ինքն ալ Երուսաղէմ գացած ըլլա- լով՝ կը կրէր «Մահտեսի» տիտղոսը:

Մատթէոս Ալլահվերտի ամուսնացած էր Տիւղեանց փեսայ Յովսէփ Զամչեանի աղջ- կան հետ, որուն անունը անծանօթ է մեզ: Յովսէփ (ծն. 1765 + 1833) ամուսնացած էր Յովհաննէս Տիւղեանի առջինեկ զաւկին՝ Սրբուհիի<sup>64</sup> (ծն. 1772 Հոկտ. 5 + 1824 Յու- նուար 6) հետ, որոնց սերունդի մասին ոչինչ աւանդած է Մէնէվիչեան:

<sup>61</sup> Հանդէս Ամսօրեայ, 1911, էջ 484: <sup>62</sup> Օրագրութիւն, 1816 Մարտ 9: <sup>63</sup> Պատմութիւն Անգից, 4. Գ. 1818, էջ 11: <sup>64</sup> Հ. Գարբէլ Մ. Վ. Մէնէվիչեան, Ազգաբա- նութիւն Տիւղեանց (տոհմաձագ):

Իր այս ամուսնութենէն աղջիկ մը ու- նեցած է Մատթէոս Ալլահվերտի, որուն ա- նունը նոյնպէս անծանօթ մնացած է, բայց ծանօթ է Մատթէոսի աղջկան փառաւոր հարսանիքը, զոր յիշատակած է ժամանա- կակից Բէօլէեան՝ տալով հետաքրքրական մանրամասնութիւն: Սա կը գրէ. «1814 Հոկտ. 18. Ի Թարապիայ եղեւ հարսանիք Կարնեցի Մաթոս աղայի դստերն ընդ Պէֆ- մէգեան Պոզոսի որդւոյն պարոն Յակոբայ- հարսանիք մեծ եւ բազմութիւն ամիրայից էր անդ. Թնկրեանք, Բլնեանք, Տալաւրեանք, Ազնաւորեանք, եւ ի Հայոց ամիրայից երե-ւելի ստափք եւ ի Յունաց՝ պէյզատէք եւ տօմնայֆ: Նաեւ Պատրիարք Վարդապետն եւ վէֆիլն, եւ սարկաւագօֆ, դպրօֆ յոյժ մեծ հանդիսութիւն եղեւ: Կնեսայրն էր Բլնեան Ամտոնի որդին Գրիգորն, որ 7 նաւակօֆ գնային 3,3 չուխտակօֆ. 3 նաւակն կանանց եւ 4 արանց. Ելլոզ (հրաժարեալ) Յօհաննէս Պատրիարքն եւս էր անդ... սալի (երրորդ) գիշերն այլազգ փեմք եկին եւ ըստ նոցա եղեւ ուրախութիւն: Տիւղեանք եւ Ալիֆա- նեանք առաքեցին զընծայս իւրեանց եւ ոչ գնացին<sup>65</sup>»:

Այս ամուսնութեան առթիւ Մէմ. Այս- պարի յօդուածադիրը կ'աւելցնէ որ Պէֆմէ- գեան Յակոբ՝ Ալլահվերտեանց փեսայ (տաճ- կերէն՝ տաւատ) ըլլալէ վերջ՝ իր մակա- նունը կը փոխէ Տամատեանի<sup>66</sup>:

Տիւղեաններու եւ Ալիքսանեանց վերա- պահութեան շարժառիթը մեզ անծանօթ է: Ձեռք գիտեր թէ ինչո՞ւ ասոնք հարսանեաց նուէրներ կը զրկեն, բայց անձամբ չեն եր- յուսէրներ կը զրկեն, Տիւղեանց եւ Ալլահ- թար: Որքան գիտենք՝ Տիւղեանց եւ Ալլահ- վերտեանց միջեւ ցրտութիւն դոյութիւն չէ ունեցած: Մանաւանդ հոս չի կրնար ցրտու- թեան վրայ իօսք ըլլալ, քանի որ Տիւղեան- ներու բոռան կատարած պատկի վրայ է խըն- դիրը: Տիւղեաններ եւ Ալլահվերտեաններ իրարու խնամիացած են յետոյ ալ, ինչպէս պիտի տեսնենք:

Մատթէոս Ալլահվերտիի աղջկան այս ամուսնութենէն յառաջ եկած սերունդը ան- ծանօթ է: Տամատեան մականունով ուրիշ Հայ կաթողիկէ հին ընտանիք ալ ծանօթ է, որոնցմէ մին Տիւղեաններու խնամիացած է:

<sup>65</sup> Անտոն Բէօլէեան, Օրագրութիւն, 1814, Հոկ- տեմբ. 18: <sup>66</sup> Մէմ. Այսպար, 1906, Թ. 4361: